

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 8—10

ՕԳՈՍՏՈՍ—ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԿԵ. ՏԱՐԻ 1951

ԲՆԸԵՇԻ ԳՊՐՈՅԸ 1500—1700

15. ՍԻՄԵՈՆ Վ. ԱՊՈՐԱՆԵՑԻ «ՄԵՆՆ»
(† 1615)

Գրիգոր Կամախեցի իր ժամանակագրութեան մէջ նուիրած է առանձին գլուխ մը «Վասն Սիմէոն մեծաւազ վարդապետին»¹, որ է Սիմէոն Վ. Ապարանեցի. բայց շատ աղքատ են իր տեղեկութիւնները ի մասին Սիմէոնի կենսագրութեան: Ունինք բարերարութեամբ կենսագրական գիծեր իր կեանքի մատարար կենսագրական գիծեր իր կեանքի մասին իր իսկ գրուածներու մէջ. ինչ ինչ նաեւ ժամանակակից յիշատակարաններու մէջ:

Սիմէոնի ծննդավայրն եղած է Աղձնեաց երբեմնի համրաւեալ Ապարանք գիւղը, որ այնպէս անուանի դարձաւ Գրիգոր Նարեկացւոյ Ապարանից Ս. Խաչի նուիրած Ներքուղեանով: Սիմէոնի ծննունդը կ'իջնայ ժ.Չ. դարու կէսին: Իր ծնողաց անուններն են Խաչատուր եւ Նարինջ, ինչպէս ինքնին կ'իմացնէ մեղի իւր 1585ին գրած Յիշատակարանի մէջ². «ՉՍիմէոն վարդապետն Ապարանեցին մէջ². «ՉՍիմէոն վարդապետն Ապարանեցին մէջ եղեցէ ի Բրիտոսս, որ ետ կապել զգիրքս յիշատակ իւրն եւ ծնաւդայն իւրոց՝ հաւր Խաչատուրին եւ մաւրն Նարինջին. թվ. Ռ.Դ.» (1585): Մայրը վախճանած է 1588ին, այս ինքն Վիպասանութեան յօրինուելէն (1590) երկու տարի յառաջ, ինչպէս կը գրէ³.

Ի յանջատման մարմնոյս ծնողէ
Երկուց ամաց աւարտերոց:

Իր ծնողքը «դտոն, դժուար եւ անբարի» ժամանակին բերմամբ կը հարկադրուի դադարել Ապարանք գիւղէն եւ ամուր ապաւնն

փնտուել յԱղիովիտ, այն է ի Մեծոփ Բաջրերունեաց. այս նկատմամբ կը գրէ Սիմէոն⁴, առանց ժամանակը մատնանշելու.

Այդ յայտպիտում ժամանակի...
Զմեզ բնակեցոյց յայտոյս ծովի (Վանայ)
Հանդերձ ծնողք յԱղիովիտի:
Ի սեփական երկրէն ելեալ,
Ըստ հին կոչման անունն Աղձնի,
Որ մերձաձայ է ի Կորդիս,
Եւ Կորձէից տանըն դրացի...
Եւ բնիկ զիւղն իմ Ապարանց,
Ի յԱրժրունի զարմէն շինած...
Արդ յայտպիտի պայծառ ուխտէ...
Նըւստ ողիս ի նմանէ է,
Վերջին ծընունդս յԱղձնեաց տանէ:

Կը յիշուի ժամանակակիցներէն Սիմէոնի եղբայրն Կարապետ, որ ամուսնացած է Ծովինարի հետ: Այս ամուսնութենէն ծնած է դաւակ մը, որ կրած է հօրեղբոր անունը՝ Սիմէոն Վ. Ապարանեցի: Այս երկու Սիմէոնները զանազանելու համար յորջորջուած են «Մեծ» եւ «Փոքր» Սիմէոն⁵:

Այս միջոցներուն Յովհաննէս Բրգութեանց վարդապետ իր Դպրոցն հաստատած էր յՈստան Բզնունեաց: Սիմէոն կ'աշակերտի անոր՝ Բարսեղ Բաղիշեցւոյ հետ. իրենց ուսման ընթացքը կը ստակուի վարդապետական իշխանութեամբ: Կարապետ Կալօնեց Մուկացի, Սիմէոնի աշակերտը, կը խնդրէ 1624ին յիշել «զհոգեւոր ծնաւդն իմ զերկոյս երանեալ քաջ բարունապետն զՍիմէոն կոչեցեալ պըւեալիկոն, որ ծնաւ զմեզ ըստ բանի բազմաձան երկօք, կըթեալ ի մամուլս վար-

¹ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղէմ 1915, էջ 376—378:
² Էջմիածին, Գեորգեան Յուլիանի թ. 102. հմտ. Կ. Տէր Մկրտչեան, Անանիա Շիրակացի, Արարատ 1896, էջ 96: Ունի անթուական Յիշատակագրութիւն մ'աւր. «ժ.Չ. դարու սկիզբը գրուած կ'իլիկոյ Տարեգրի մի տունացից վրայ». «Ես Սիմէոն վարդապետս Ապարանեցի գոյս գիրս գրեցի». 2. Ղ. Ալիւան, Հայագրատու, Ա., 128, ծ. 4:
³ Վիպասանութիւն, էջ 129:

⁴ Անդ է 135—136:
⁵ Լալայեանց, Յուլիանի հայերէն ձեռագրաց Վասպուրականի, էջ 600—602: Կարապետ Մուկացի Կալօն կը ինչէ զինքը իր աշակերտներուն թուին մէջ յամի 1624. «Եւ զտէր Սիմէոն Ապարանեցին՝ զեղբորորդին հոգեւոր հօրն իմոյ», Երուսաղէմ, թ. 2560: Ինքն փոքր Սիմէոն 1647ին օրինակել կու տայ Աւետարան մը ի յիշատակ իր ծնողաց եւ «հօրեղբորս Սիմէոնի վարդապետին» (Լալայեան, Յուլիան. Վասպուր., թ. 252, էջ 600/602:

անկաւոր գրիչ: Մեծօրայ Ողբն եւ «Ողբանքն ի վերայ թախտին Տրդատայ» իր գրուելու դործոցներն կրնան համարուել: Հայրենի աշխարհին աւերակներուն ի տես յուզուած, օտարին լուծին ծանրութեան տակ ընկճած՝ վրէժխնդրութիւն կ'աղագակէ, լծընկէց ըլլալ կը ձգտի. իր բուն գայրոյթը ատրաշէկ շանթեր կը ժայթքէ օտարադէն, սյրազգի թշնամիներու դէմ: Հայրենի զիւցազները կ'ողէկոչէ, անոնց օրինակով շրջակայքը հրդեհել կ'ուզէ, հայրենիքի ազատութեան համար քիջոցներ կը խորհի: Անճարութեան մէջ բարձրացուցած աշքերն Երկինք, Բարձրեալէն զուարթ ապագայ մը կ'ուզերձէ իր հայրենիքին համար: Եզական ուշադրութեան արժանի է Երզնշու իր այս զգածումներով:

Սխմէն ունէր զարգացած միտք մը եւ բեղմնաւոր գրիչ: Ոճը կը սիրէ թուիչներ. բայց թերութիւններ երեւան կը բերէ լեզուն:

- Սխմէն հեղինակած է.
 - ա. Վիպասանութիւն սակա Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի.
 - բ. Ողբ ի վերայ ատման Թաւրիզի.
 - գ. Ողբանք ի վերայ թախտին Տրդատայ:
- Երեքն ալ չափական երկասիրութիւններ. որոնց մասին խօսած ենք արդէն ալուր:
- Սխմէն Ապարանեցւոյ մասին գրուածքներ.

1. Հ. Ղ. Ալիշան, Հայապատում, Ա., § 120, էջ 127—128:
2. Հ. Ն. Ակինեան, Սխմէն Վ. Ապարանեցի, Հանգ. Ամս., 33 (1919), 79—96:

16. ԿԱՐԱՊԵՏ Վ. ԿԱՆՕԵՆՅ ՄՈԿԱՅԻ
(† 1637)

Կարապետ ինք զինքը այսպէս կը ներկայացնէ 1624ին. «Ես մեղաւք լցեալ Մոկացի Կարապետ պիտակ եւեթ անուամբ վարդապետս եղէ ցանկացող Աստուածաշունչ Գրոցս եւ ետու գրել գաս... Աստուած ողորմի ասացէք ինձ... Կարապետիս եւ ծնաւդաց մեր ըստ մարմնոյ Մեսրոպին եւ Աղամին եւ եղբարց իմոց Սաշատրուն եւ Հայրապետին եւ բւերցն իմոց Յինախին եւ Վարդին եւ Մարիամին. եւ հօրեղբաւրն իմոց Սրապիտին եւ որդւոց նորա Աւագին, Միխիթարին... Դարձեալ... յիշեցէք... զհոգեւոր ծնաւդն իմ զերիցս երանեալ քաջ բարունապետն զՍխմէնն կոչեցեալ պրեւտիկոսն որ ծնաւ զմեզ ըստ բանի բազմաշան երկօք, կրթեալ ի մա-

մուրս վարժարանիս ի յոյսն կենդանի: Մանաւանդ զուսումնակից նորին զԲարսեղ բարունապետն... (որք) ի միւսմ ամի վճարեալ հասին ի կէտ կոչմանն... Դարձեալ... յիշեցէք... զհոգեւոր եւ զհիւստ հպատակեալ որդեակն մեր որ կան յօժարութեամբ ի յընթերցումն աստուածային տառից՝ զՄիլքիսէթ եպիսկոպոս եւ սպասաւոր բանից աստուածականաց, եւ զտէր Սխմէնն Ապարանցին, զեղբորորդի հոգեւոր հօրն իմոց, եւ զտէր Ստեփանոս նորընծայ կրօնաւորն եւ զՄեսրոպիկ (այլուր Բարիկ սարկաւազ) եղբոր որդեակն իմ. եւս սուսել զտէր Գրիգոր հերպեան Սորեցի, որ է մեզ ընդունող եւ ասպնջական յամենայն ժամանակս մեր»:

Յիշատակարանս կը գտնուի Երուսաղէմի Թ. 2560 (Աստուածաշունչ) ձեռագրին վերջը, զոր յանձն ատած է Կիրակոս քահանայ գրեկ, ծաղիկ եւ կապել: Այս ձեռագիրը ասպ նուիրած է ի Դուսն Ս. Յակոբայ Գրիգոր պատրիարքի օրով:

Մեզի չէ հաղորդուած, թէ Մոկաց աշխարհի ո՞ր գիւղին մէջ տեսած է Կարապետ իր առաջին լոյսը: Երուսաղէմի Թ. 308 ձեռագրին գրիչը Գրիգոր կ'անուանէ զինքը Կալօնց. իսկ Կարապետ Բաղիշեցի՝ պարզապէս «Կալօ»: Իր ուսումը ատած է Կարապետ Սխմէնն Ապարանեցւոյ († 1615) զպրոցին մէջ:

1616ին իր յանձնարարութեամբ Գրիգոր գրիչ, որդի Ամիրապետի կ'օրինակէ Մովսէս Սորենացւոյ, Մեսրոպ երէցի եւ Եղիշէի պատմագիրքերը (այժմ Երուսաղէմ, Թ. 308); իսկ 1624ին Միքայէլ Ասորոյ եւ Փաւստոսի Բիւզանդեայ պատմագրքերը (Երուսաղէմ, Թ. 307) եւ Ազաթանդեկոսը (անդ, Թ. 309):

Գրիգոր Դարանազցի կը գրէ 1629ին, թէ Կարապետ «բազում ժամանակ է որ Երուսաղէմայ սպասաւորութիւն կ'անէ, յամենայն երկիր ընթանալով շրջեալ ողորմութիւն խնդրելով վասն սուրբ Երուսաղէմայ կարեացն եւ պիտոյիցն եւ ծանր հարկապահանջութեան աղաղաւ: Մէկ երկու ամ մի շուրջ գարով եւ մէն ամ նստելով, այսպէս ուխտ արարեալ» (394): Այս պաշտօնով առաջին անգամ կը հանդիպինք իրեն ի Կաֆայ: Երեւանի Թ. 222 (Աւետարան, գրուած 1320ին Սերաստացի Ստեփանոս եպիսկոպոսի համար) ունի յիշատակագրութիւնս Կարապետ վարդապետի գրչէն. «Ի թվականիս հայկազեան մեծ ումարին քսան եւ մին յորեկնին,

եւ բարդեալ յաւելորդն առ նմա՝ երկուսունակ եւ մակ եռակ համարին (21 × 50 + 20 + 3 = 1073, այն է վրկչական 1624): Ես նուստ Կարապետ պիտակ եւեթ անուամբ վարդապետս, սպասաւոր սուրբ Երուսաղէմայ, եկի նուիրակ վասն պիտոյիցն սուրբ Երուսաղէմայ ի կողմանս հիւսիսայ՝ ի նահանգս Հոնաց, ի նուաճեալս յազգէն Նեաուդաց եւ Թուրքաց, ի ծովահայեաց քաղաքս Կաֆայ կոչեցեալ: Եւ տեսի զսուրբ Աւետարանս անկեալ ի յուզմունս խաւսից այլոյ մանց, ի յանգուուն բերան մարդկանց, որ ի բերան ատեալ զյիշատակս այլոց՝ կամին կլանել, եւ վայ ի վերայ անձանցն բերել, եւ յաւիտենից տանջանայն զինքեանս մատնել: Զոր խափանեցաք զնոցին չար կամքն: Ապա, եթէ ոք այսուհետեւ թէ կարգաւոր, թէ աշխարհական զայս սուրբ Աւետարանս ի բերան բերէ, զաւիտենի եւ տէր կանգնի եւ հակառակի նա ընդ վաճառողին Յիսուսի Յուզայի պատիժ կրեսցէ, եւ ընդ գողոյն Աքարա՝ նոյվեալ եղիցի ամենայն ընտանեաւն իւրովք ամէն:

«Այլ կացցէ սա անջինջ յիշատակ ի քաղաքս Կաֆայ, մինչեւ յաւիտեան: Եւ լաւ պահողն եւ խնամ տանողն աւրհնեալ եղիցի յԱստուծոյ. եւ ի սուրբ Երուսաղէմայ. եւ ի սուրբ Աւետարանէս, եւ ամենայն ընտրելոցն. նաեւ ի մէնջ. ամէն»:

Հաւանօրէն ուղիղ չէ ըստ այսմ Աղաւնունի Մկրտիչ եպիսկոպոսի հաւատարմը, թէ Կարապետ «1629ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (ՄՁ. Թ. 295). Գրիգոր Պարանազը պատրիարքէն նուիրակ կը կարգուի (ՄՁ. Թ. 1919)» (Միւրանք եւ այցելութեան... էջ 191):

Գրիգոր Դարանազեցւոյ համաձայն Կարապետ «ի թվին ՌՂԸ (1629) յՂտամբօրս երկի նուիրակութեան աղաղաւ... եւ մէկ ամ եկաց յՂտամբօր եւ յԱտրանոց եւ մեր յՂտատօս. եւ այլ ուրեք ոչ կամեցաւ գնալ վասն խառնախնդար շիթմանցն... վասն որոյ շուտ ելաւ գնաց ի հետ ուխտաւորացն «Երուսաղէմ» (394—395):

Այն միջոցին, որ մեկնեցաւ Կ. Պոլսէն, Թոգոյումը ամգոճ Զաքարիա պատրիարքէն՝ վար կ'առնէ զանկիս պատրիարքական աթոռէն եւ յանուն Կարապետ վարդապետի աթոռէն եւ յանուն Կարապետ վարդապետի «յամի ու պարաթ» կը հանէ: Բայց ան հասակ բազմաթիւ զբաւոր զիմուսներու

յանձն չ'առնել որ եւ է կերպ գալ Կ. Պոլիս եւ նստիլ պատրիարքական աթոռին վրայ, նկատի առնելով մայրաքաղաքի Հայոց ներքին երկպառակութիւնները: Այսպէս, կ'ըսէ Դարանազցի, պատրիարքութիւնը երկու ամբողջ տարի իր անուան վրայ մնաց, մինչեւ որ Գրիգոր Կարապետ Կ. Պոլիս հասաւ եւ յինքն կորցեց աթոռը (անդ, էջ 397):

1634ին Ծոպատիկ պատահեցաւ. այս աթոռի Կարապետ վարդապետ «անհուն ծախս արար» կը գրէ Դարանազցի:

Երուսաղէմ գտնուած միջոցին Կարապետ կը պարապէր ուսուցչութեամբ, ինչպէս կարելի է գտել Երուսաղէմի Թ. 2560 ձեռագրին յիշատակագրութեանէն, գրուած հաւանօրէն 1631ին իր իսկ գրչէն. Գրիգոր Պարանազը «բազում երախտիք եւ աշխատանք ունի ի վերայ վիճակիս Հայոց, եւս սուսել ի վերայ մեզ եւ ի վերայ աշակերտաց մերոց»: Նոյնը կը վկայէ Դարանազցի, կըր կը գրէ, Կարապետ «հանապազ աշակերտաց դասասաց է, որ երեք շորս աշակերտ հաներ է մինչեւ ցայսօր՝ անուանի կատարեալ վիճիստիպաք եւ այլք ընտիր վարդապետք են կեցել յիւրեանց Մոկաց աշխարհն եւ այլ Ոստանայք, գորոց անուանքն ոչ գիտելով մեր» (էջ 397): Կարապետ վերագոյն, 1624ի յիշատակարանին մէջ յիշած էր այն շրջանի աշակերտներու անունները:

Կարապետ վարդապետ վախճանեցաւ 1637ին Երուսաղէմ (Դարանազցի, էջ 397): Անոր գերեզմանը Երուսաղէմ ցոյց կու տայ նաեւ իր աշակերտն Սխմէն Փոքր Ապարանեցի, որ Ս. Յակոբեանց Աւետարան մը կը նուիրէ ի յիշատակ ի մէջ այլոց «նաեւ հօրն իւրոյ հոգեւորի Կարապետ զիմանական բարունապետի, որ հանդուցեալ է առ Քրիստոսս եւ եղեալ կայ յԵրուսաղէմ ի սուրբ Փրկչի եկեղեցին» (Երուսաղէմ, Թ. 12.670):

Արդէն 1631ին նուիրած էր իր գրքերը Ս. Յակոբեանց Մատենադարանին, Երուսաղէմի Թ. 2560 Աստուածաշունչի սկիզբը (թղ. 4ա) արձանագրած է. «Ի թվին Հայոց Ռ եւ Չ (1631), ի ժամանակս, յորում էր Հայրապետ սուրբ Երուսաղէմի Գանձակեցի տէր Գրիգոր սրբազան... եւս նուստ Մոկացի պիտականուն վարդապետ .Ե. պատուական զիրք տուի յիշատակ Ս. Երուսաղէմայ ի դունս սուրբ Յակոբայ»

Երևանի Թ. 395 Տաղարանի համաձայն Ներսէս եպիսկոպոս վարձանած է Խրիմ եւ թաղուած տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Տաղարանին գրիչն է Խաչերես քահանայ, գրուած 1608—1656 տարիներուն. հոս Ներսէս եպիսկոպոսի «Ղարիպն յորժամ արար խորհուրդ զնալոյ» տալը խորագիր ունի. «Տաղ Ներսէս վարդապետէ, որ հանգուցեալ է ի Խրիմ Աստուածածին»: Մահուան ինչպէս նաեւ Բաղէշէն մեկնելու տարիները ճշգրիտ չենք կրնար նշանակել: Չարմանալի է որ նոյն Խաչերես քահանան, որ գրած է Խրիմի 1608—1656 տարիներու ժամանակագրութիւնը, Ներսէսի մասին որ եւ էրան չէ արձանագրած այդ տեղ: Հայրապետ Ղուկիկի վերագրածն է Բաղէշ: Ան քաղաքին մէջ էր 1627/8ին, երբ եկաւ Գրիգոր Երէց Մշեցի աշակերտելու իրեն: Գրիգոր դաւազանի իշխանութիւնը ստանալէ ետք իր Հայրապետ վարդապետին հետ դացած է Էջմիածին, Փիլիպոս կաթողիկոսի (1634—1655) եւ անկէ եպիսկոպոս ձեռնադրուած, ինքն եւ ուսուցիչը (էջմիածին, Թ. 146):

Կերեւոյ թէ Ներսէս եպիսկոպոս Բաղէշն ուղղակի դացած է Իտալիա. ան 1623ին գտնուած է Վենետիկ եւ 1624ին Հոռոմ: Այս մասին մեր տեղեկութիւններն են.

ա. 1623, նոյեմբեր 10ին ի Վենետիկ Գէորգ Գոքիլոյ վաճառականն եւ սանսէրը թարգման կ'ըլլայ քանի մը վիճակներուն, որոնց երկուքը Երզնկացիներ են, խօսքայ Սէֆէր որդի Գէորգի եւ Աբրահամ որդի Յովհաննէսի Emiliti կոչուած, որոնք Վենետիկի նոտարին կը ներկայանան, ներկայացնելու Մեծ Հայաստանէն եկած արքեպիսկոպոս մը, Ներսէս անունով, որուն թեմն է Բաղէշի (Buchis) Խնդրակատար Ս. Աստուածածին (S. Maria della Grazie) վանքը: Այդ եպիսկոպոսը իր 42 տարեկան էր, միջակ հասակով, սեւ եւ բոյրակ մօրուքով, քիթը քիչ մը տափակցած (ha il naso alquanto fraccato): Վկաները երգմամբ կը հաստատեն, թէ ան հաւատքով ուղղափառ է:

Այսպէս ըստ գիւնանական վաւերագրոց, զորոնք քաղուածօրէն տուած է Հ. Ղ. Ալիշան⁵:

Վենետիկէն անցած է Ներսէս Հոռոմ: Հ. Գրիգորիս Գալէմբարեան գտած է Հոռոմի

Տարածման հաւատոյ ժողովի Նխասրուն արձանագրութիւններու մէջ տեղիքս. «31 մայիս 1624. Ներսէս Բեթղէմի (Խաչերէս Բաղէշի) արքեպիսկոպոսը խնդրալիք մը ներկայացուցած էր Ս. Ժողովին: Կորոշէ ժողովը, որ շնորհուի անոր ապրուստի համար 50 սկուս»:

Հոս 1624ին տուած է հետեւեալ վկայութիւնը, նոյն քաղաքին մէջ նոյն տարին ըյս տեսած «Առաւել պարզարանութիւն քրիստոնէական» գրքին համար, այսպէս.

Ես տէր Ներսէս արքեպիսկոպոս Բաղէշայ քաղաքին տէսի գայս գիրքս որ է պարգաբանութիւն քրիստոնէական տրնօրինականացն, քարքրմանեալ ի լաթին լեզվէ ի Հայոց բառս ի տէր Պետրոս Պողոս քահանայ կրթօնավորէն: Արդ վասն ըստագութեան սորայ վրկայեմ եւ կամակից եղէ կազմութեան այրին զի նըշմարիտ եւ ըստուք է բանք սորայ. ի քվ. Հոց. Ռ. ՀԳ եւ Փըռանգաց ՌՌԻԳ:

Ես տէր Ներսէս արքեպիսկոպոս Բաղէշոյ քաղաքին ձեռք իմօք գրքեցի գայս վկայութիւնս:

Ուղղագրական անձնագրութիւնները անշուշտ անխնամ ազգագրութեան վերադրելու է:

Ներսէս արքեպիսկոպոսի մէկ իւզաներկ պատկերը ունինք Հոռոմ, Ս. Վրաս Հայոց Հիւրանոցի մէջ, բերուած հոն նոյն քաղաքի Ս. Մարիամ եկեղեցւոյ Հայոց Հիւրանոցէն: Պատկերին տակ կը կարգացուի հետեւեալ արձանագրութիւնը.

D. ARCHIEP. PAILENSIS EX ARMENIA MIN. AD INNOCEN. X. PEDES CATH. FIDEM PROFESSUS. IN HOC PRIMUM ARMENORŪ HOŠPO. DEINDE PONTIFICIO MUNIFICĒTISSIME RECEPTUS, EXIMIO PIETATIS EXĒMPLO PLURA IN TEMPLO S. M. AEGIP. FRECŪECI. CARD. AC PRINCIPŪ CORONA SOLEÑIA SACRA CELEBRAVIT. A. IUB. MDCL.

Այս ինքն՝
ՏԵՐ < ՆԵՐՍԵՍ > ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԲԱԳԵՇԻ Ի ՓՈՔՈՒՆ ՀԱՅՈՑ, ԱՌ ՈՏՍ ԻՆՆՈՎԿԵՆՏԻՈՍԻ Ժ. ԶԿԱՌՈՂԻԿԷ ՀԱՌԱՏՍ ԳԱՒԱՆԵԱԼ, ՆԱԵ Ի ՍՄԻՆ ԷԻԻՐԱՆՈՅԻ ՀԱՅՈՑ, ԱՊՍ Ի ՔԱՀԱՆԱՅԱՊՍԵԼԷ (°) ՇՔՈՎ (°) ԸՆԿԱԼԵԱԼ. ԱՆՍՈՎՈՐ ՕՐԲԵԱԿԱԻ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՃԱՆԱԳՈՅՆ ՊՍԱԿԱՆ ԿԱՐԳԻՆԱԼԱՅ ԵՒ ԻՇԵԱՆԱՅ ՅԱՃԱՆԵԼՈՅ Ի ՏԱՃԱՐ Ս. ՄԱՐԲԱՄ ԵԳԻՊՏՍԻՈՅ, ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՍ ՆՈՒԻՐԱԿԱՆՍ ԿԱՏԱՐԵԱՅ: ԱՄ ՅՈՒՆԵԼԵԱՆ 1650:

⁵ Հոց Վենետ, Վենետիկ 1896, էջ 341—342:

Այս տեղեկութիւնները պատկերի շուրջ եւ պատկերը կը պարտիմ Հ. Գ. Գալէմբարեանի, զոր գտայ անոր անտիպ ձեռագիրներու մէջ: Թուականը պատկերահանէն է, յետ ժամանակի աւելցուած:

Արտաքին եւ ներքին ազդեւորները համաձայնեցնելու համար հարկ է ենթադրել, թէ Ներսէս՝ Կարապետ եպիսկոպոսի ինչպէս նախորդը նոյնպէս յաջորդն եղած է (1623): Ապա մեկնած է Վենետիկ, Հոռոմ եւ Կաֆաուր եւ վախճանած է (1634⁶):



Ներսէս եպ. Բաղէշի

ՆԵՐՍԵՍ ԲԱԳԵՇԻՅԻՈՅ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կը կանխեմ ըսել, թէ տարբեր անձ է Ղարիպն Ներսէս, որ 1475ին գտնուած է Կաֆաուրինք իրմէ տալս:

Ողբ մայրաքաղաքիս Կաֆայու: Ինն հարիւր Հայոց թըվին Քըսան եւ չորսն էր աւելին (1475) Ի յազմանէ մեղաց չարին, Միաբանեցան այն Տաճկընին...

Վջ. Ով զիս յիշէ պահ մ'ի բարին, Ձղարիպ Ներսէսս ի սեղանին: = Երևան, Պետ. Թանգ. Թ. 395, թղ. 35ա—36ա (1620): Վիեննա, Թ. 1002, թղ. 74ա—76ա (1654):

Ներսէս Վ. Բաղիշեցւոյ են. 1. Ան երջանիկ եռամեծ եւ արդիւնաբան տէր կարապետ յարունապետն գրեալ բան գովեստից ռոտանաւոր տաղիւ չափեալ ի

տրուպ եւ ի ներգետնայ անձնէ ի Ներսէս եպիսկոպոսէ գրոց աշակերտէ, ի պատմաաւուրն գաւազան առնելոյ:

Անեղն Աստուած ամենակալ, էիցս բնաւից պատճառ եղեալ...

Վ. Առ վարդապետն իմ բարունին, Տէր Կարապետ Բաղիշեցին. Ես վերջացեալս առ ի բարին, Ներսէս անուն ծառայ նըմին. Շարագրեցի գրանս զըրուատին, Ի մերս Հայոց թուականին, Հազար 'ւ յիսուն իններորդին (1610), Ի խրոսովեալ ժամանակին. Որ եղև մեզ նա վարժարան, Ծնորճօք Հողւոյն իմաստութեան. Յորմէ առաք մեք դաւազան, Դ ուսուցելոյ ետ մեզ հրաման...:

Չեռագիր՝ էջմ. 519, թղ. 104ա—108բ (Ժէ.): 2. Նորին Ներսէս Բաղիշեցոյ սասցեալ. Յիսուս որդոյ դոյն:

Անեղն Աստուած անճառական, Անհուն, անհաս եւ անսահման, Անուր, աներր, անսկզբնական, Սկիզբն եւ պատճառ էից համայն...:

Վ. Ի թուին Հայոց հազար լրման, Վաթսուն եւ վեց ի յաւելման (1617), Ողեալ եղև բանս օրհնութեան, Վարդապետէ Ներսէս անուն:

Չեռագիր՝ Վենետիկ, Մխիթ. Մատ. Թ. 278, թղ. 59ա—60բ (յամէ 1655. համա. Սարգիսեան, Յուլյակ, Բ., էջ 944): Երուսաղէմ, 1455:

3. Ողբ գղջական, խօսք ընդ Աստուծոյ, տաղիւ չափեալ ի նուաստ ոգւոյ Ներսէս վարդապետէ Բաղիշեցւոյ:

Անսկիզբն անճառ Աստուած, արարող էիցս ամենայն, Արարեր զմարդն ի հողոյ, եւ ետուր հոգի բանական...:

Վ. Ոգեալ բանս ողբերգական, Ի թվին սեռիս հայկազեան, Հազար վաթսուն 'ւ եւթն ամին (1618), Ժամանակս պատն եւ նեղութեան: Ողբալով ի ձէնջ հացեմ հոգեւոր եղբարք ամենայն, Յիշեցէք ի Տէր Քրիստոս զմեղուցեալ Ներսէսս անարժան:

Ձեռագիրք՝ Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 395, Թղ. 106բ (սկիզբը սրակա): Էջմ. Գեւ. 281, Թղ. 1բ—2ա = Աճառեան, Տաղարան, Թղ. 470ա—471բ (A): Սիւրմէեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Հայկ. Բ., Թ. 15, 129ա (ԺԲ. դար, Յուց., էջ 63: B): Երուսաղէմ, 976, 108բ—110ա (ԺԷ: C): 1455:

Հրտ. Էջմիածին ամսագիր, 1944, Թ. 11—12, էջ 34—35:

4. Նորին Ներսէսի ի խնդրոյ Հայրապետ աշակերտին իւրոյ:

Աստուած անհաս անկրարար,
Ողորմութեամբ գէական արար,
Նախ գերկնային զօրս կամարար,
Օրհնարանոյ միշտ անդադար...:

Վ. Ի թուականիս մերոյ հազար,
Վաթսուն եւ վեց այլ յաւել կայր (1617).
Ոգեալ եղև բանըս յարմար,
Ի Ներսէսէ առն ապիկար...:

Ձեռագիրք՝ Վենետիկ, Մխիթ. Մատ., Թ. 278, Թղ. 60բ—62ա (1655: Մարգիսեան, Յուցակ, Բ., էջ 944): Երուսաղէմ, 1455:

5. Տաղ ի Ներսէս վարդապետէ, որ համագուցեալ է ի խրիմ, Աստուածածին:

Ղարխան յորժամ արար խորհուրդ գընա-
լոյ,
Տըրտմեցաւ լաւագին վասն երանելոյ:
Տընէն ելաւ լայով հառաչմամբ ողբոյ,
Բաժանեցաւ կըրարց եւ շատ սիրելոյ...:

Վ. Ի թվականիս մերոյ սեռիս հայկազան,
Հաղար վաթսուն եւ հինգ ամին ի լրման
(1616),

Տաղս շարագրեցաւ բան ողբերգական,
Կենաց զարիպին եւ վասըն մահուան:
Երգող տաղիս այսմիկ, կըրարք պատուա-
կան,

Այլ եւ աստուածասէրք լողք միարան,
Յատաջ ի ձէնջ հայցեմ վասն զիս յիշման,
Ձերսէս անուն նուաստ ոգիս անարժան:

Ձեռագիրք՝ Երեւան, Պետ. Թանգարան, Թ. 395, Թղ. 28ա: Վենետիկ, Մխիթ. Մատ. Թ. 277, Թղ. 79ա—80 (ԺԷ. դարէ սկիզբը թերի. Մարգիսեան, Յուց., Բ., էջ 936—937): 278, Թղ. 58բ—59ա⁶ (յամէ 1655.

⁶ Սորապիրք՝ Ոտանուոր եւ տաղս ի Ներսէս Բազմապետ վարդապետէ ասացեալ է. Յովասափու գրչին:

Յուց., էջ 944): Տաղարան Սահակեան Շաւարշ վարդապետի, Թ. 2, էջ 123—128: Եզմ. 976, 110ա (ԺԷ.): 744: 1455:

Հրտ. Էջմիածին ամսագիր, 1944, Թ. 11—12, էջ 33—34 (Ծովական):

Ներսէս եպ. Բաղիշեցի հետեւոյ մըն է գրական սարգ ոճի: Իր տաղերը թէպէտ չունին բանաստեղծական թուիչք, բայց բղիթած են բարի սրտէ եւ են մտածող մտքի եւ զգայուն հոգւոյ արտադրութիւններ:

Ճաշակի համար կը ներկայացնեմ Ձղջահան Ողբը, որ յորինուած է 2—5—3—5 հայրեններու չափով:

Ողբ գղջական, խօսք բնի Աստուծոյ,
տաղիւ չափեալ ի նուաստ ոգւոյ Ներսէս
վարդապետէ Բաղիշեցւոյ:

Անրակիրն անձառ Աստուած,
արարող էիցս ամենայն,
Արարէր զմարդն ի հոգոյ
եւ ետուր հոգի բանական:

5 Աստուած նորոգող մարդկան
ի մեղացըն մեր նախնական,
Սրբեցեր զմեզ ի մեղաց
եւ լըցեր շնորհօք աւագան:

Քանցի շարն անդընդական,
10 որ արար վրնաս բազմագան,
Մարտեաւ ընդ յիմար հոգւոյս
եւ արար զիս մեղաց կոխան:

Իմ մեղքն զիս խելաց թափեաց.
եւ գրկեաց հոգիս բանական,

15 Լըցաւ յիս Գըրոցըն բան՝
մեղքն հանէ զիմաստրս մարդկան:

Իմ մեղքն զիս շնորհաց զըրկեաց
եւ արար թափուր եւ ունայն.

Կորուսի ըզմեծութիւն
20 գհոգեւոր գանձն անասական:

Ձքանքարն որ ի քէն առի,
ի շնորհաց Հոգւոյդ սիրական,
Ոչ շահեցուցի ըզնա,
կորուսի ընդ վայր գամենայն:

Խորագիրք՝ A ողբ ի Ներսէս Վ. է աս Աստուած:
BC Ողբ գղջական խօսք բնի Աստուծոյ, տաղիւ շա-
փեալ ի նուաստ ոգւոյ C) Ներսէս Վ. է Բաղիշեցւոյ:
5 նորոգող: — 11 հոգւոյս: — 23 հոգւոյդ:

⁷ Սորապիրք՝ Տաղ Ղարխոյի Մանուկեցի Ներսէս վարդապետէ:

25 Մարուր եւ պայծառ կղէ,
երբ առի ըզնորհս աւագան.
Այժմ աղտեղութեամբ լըցայ,
կղկիլի կղէ 'ւ անպիտան:

Ես մարդ ի պատուի էի
30 եւ լըցեալ փառօք հրաշական,
Մեղաւք հանց թափուր կղէ,
գերդ յիմար անասուն անբան:

Պայծառ ի վառ ասող էի,
լի լուսով էի ի ծաղման,
35 Մեղօք իմ նուագեցայ,
չիջաւ լոյս հոգւոյս բանական:

Ես ծառ պըրտարեր էի,
գոր տընկեաց աջդ անկական,
Յանկարծ չորացայ մեղաւք,
40 կու այրէ հուրն անչիջական:

Ես ծաղիկ պայծառ էի՝
սուղեալ ցողովդ վերնական,
Յետոյ խորշակաւ հարայ,
եւ կղէ յոյժ ոտից կոխան:

45 Անուշ հոտով լի էի,
որպէս խունիկ եւ իւղ օծութեան,
Մեղաւք վերացաւ յինէն,
եւ կղէ գատարիկ եւ ունայն:

Լուսափայլ ոտիկ էի,
50 եւ պատկեր սուրբ արքայական,
Թաղեցայ ի յազր մեղաց,
ժանկեցայ եւ կղէ խոտան:

Իմ մեղքըն հոգմոյ նըման,
զիս վարեաց յոյժ մոլորական,
55 Տարաւ քարէ քար երես,
որպէս խոխու ի յաւուր աշնան:

Իմ մեղքն թանձր ամպոյն նըման
չար կարկուտ երբ ինձ սպանման,
Եհար եւ տանջեաց զհոգիս,
60 եւ արար գամէնն խոց եւ դան:

Իմ մեղքըն ծովու նըման,
ծառայէր խիստ արձակ եւ լայն,
Քաշեր զիս ի մէջ առեր
միշտ շարժի պահէ յերկրման:

65 Իմ մեղքըն հըրոյ նըման,
բարկացեր բոցով բորբոքմամբ,

35 չունի է: — 55 երէտ:

Եւ կկեալ պատեալ է զիս
կու այրէ սաստիկ տոչորմամբ:

70 Իմ մեղքն ինձ որդունք ծընան,
ստաւել քան ըզար գաղան,
Անբուն անմահ են նոքա,
միշտ տանջեն անվըճարական:

Իմ մեղքն ինձ խաւար կած,
զիս պատեաց մութն ըստուերական,
75 Ձըրկեաց ի յանկ լուսոյն,
վայ հոգւոյս ի յահեղ յատեան:

Եղուկ ինձ հազար բերան,
եմ լըցեալ մեղաւք ամենայն,
Վախեմ սեւերես յինիմ,
80 յորժամ գաս, Տէր, ի դատաստան:

Յայնժամ նախատինք կըրեմ
ստաջի մեծի բազմութեան,
Ծառոյ չար եւ վառ լըեմ,
երբ տանջիմ անկոր յախտեան:

85 Իմ Տէր, քեզ մեղաց դոչեմ,
հառաչեմ սըրտու զըզական,
Աչացս արատաւք թափեմ,
եւ լայով գամ քեզ յանդիման:

Ի քէն թողութիւն խընդրեմ,
90 ողորմած Աստուած յախտեան.
Յայլ ումեքէ ճար չունիմ
բայց ի քեզ յուսամ անխափան:

Փըրկեա զիս նախատանաց,
յանիժից գատապարտութեան,
95 Եւ ի զըժոխոյ շարեաց,
տանջանաց յախտեանական:

Ի խաւարոյին բանտէն
լալ աչաց կըրճել ատամանց,
Յանչիջանիկ հըրոյն
100 թիւնաւոր եւ անբուն որդան:

Յանլուծանիկ կապէն
ծըժըմոց զարչահոտութեան,
Եւ այլ բազում տանջանաց,
բարեխօս քեզ սուրբ ամենայն:

105 Ծընօղ Աստուծոյդ մերոյ
Մարիամ կոյս անասական.
Ընդ նըմին կըցորդելով,
Կարապետն քո բանին ձայն:

73 յամենայն: — 87 հառաչեմ:

